Արդարև ինչպէս կը տեսնուի անիկա հանդարտ չի մնար և շատ մը փորձեր կը կատարէ Կեսարիայէն Կ. Պոլիս դառնալու համար, և անցողակի յաջողութիւններ ալ ձեռք կը բերէ։

Հազիւ տարի մը յետոյ իր երրորդ պատրիարքութեան անկումէն, այսինքն 1613ին սկիզբները, յանկարծ Կ. Պոլսոյ մէջ կ'երևայ, ընկերակցութեամբ Յովհաննէս Այնթապցի «Բարեբարոյ» կոչուած Կիլիկիոյ կաթողիկոսին (1602–1622) որ զինքն եպիսկոպոս ձեռնադրողն էր, և Մինաս Թացախ(*) եւ Մինաս Կարնեցի եպիսկոպոսներուն (Ազգապատում էջ 2321)։

Կեսարացի կրցած էր համոզել Յովհաննէս Այնթապցին, որպէսզի իրեն աջակցի և Սիսի Աթոռին Կ. Պոլսոյ վրայ ունեցած հին հեղինակութիւնը ի գործ դնէ և զինք պատրիարք դնէ։

Յովհաննէս Կաթողիկոս թերևս համոզուած էր ասոր՝ տեսնելով որ Կ. Պոլսոյ պատրիարքական աթոռը կը գրաւէին էջմիածին ձեռնադրուած եպիսկոպոսներ։

Սակայն Կ. Պոլիսը վերստին Կիլի-

(*) Յովհաննէս Այնթապցիի յաջորդած է իբր կաթողիկոս Կիլիկիոյ (1622-1632) եւ մեռած է Երզնկա (Գալէմքեարեան. **Կենսագրութիւններ** էջ 14)։